



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԲ, 1863 — ԻԱ ՏԱՐԻ — ՅՈՒԼԻՍ

Ա Շ Ո Տ Ա

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱԶ

(Տես յերես 145 - 177)

Է. Յետ երեսուն տարւոյ Սմբատայ սպարապետութեան և Աշոտոյ կենաց՝ հասաւ Հայոց մեծ ալէկոծութեան և վտանգի պարագայն, զոր առաջ յիշեցինք, Բագարատայ և Ապուսէթի դիպուածովք, որոց համար եկաւ Բուղա՝ ՚ի Հայս: Նախատես և նախահոգ սպարապետն իր իշխանակցաց պնդազլխութիւնը տեսնելով և չկարենալով զամէնքը համոզել, ջանաց մնացածը և կրցածը ապահովել և դեռ Սև զօրավարն (Բուղա) իր աշխարհէն չարժած՝ Սմբատ իմանալով եղած պատրաստութիւնը, թէ անոր և թէ ամիրապետին թղթով և ընծաներով իմացուց որ ինքն ապստամբաց կողմ չէ, այլ օրինաւոր իշխանութեան հաւատարիմ: և այսպէս առաջին յաղթութիւն մ'ըրաւ բռնաւորին դէմ, և Հայաստանի միջնաշխարհը ապահովցուց. զոր և այլ աւելի հաս-

տատեց՝ երբ Բուղա Ատտիղասայ պէս սպառնալեօք ելեր կու գար մեր աշխարհը. այս անգամ Հայոց պահապան հրեշտակն՝ ՅՅամեայ կայտառ և հզօր երիտասարդի մը կերպարանօք ելաւ անոր դիմաց, աչքը շլացուց, սիրտը շարժեց, խոստմունք առաւ որ հլու եղողին փնաս չհասցընէ, և այնպէս թողուց որ մտնէ ՚ի Հայս. այս հրեշտակս էր ինքն ԱՇՈՏ, հասակին և վայելչութեան և զինուորութեան ամենէն փայլուն և ծաղկած ատեն. անշուշտ Բուղա իրեն բաղդ այլ սեպեց որ այդպիսի անձ մը և անոր նման եղբարք և հայր իրեն դիմակաց պիտի չըլլան: Աշոտոյ քաղաքական և ամենայն յիշատակեալ գործոց մէջ այս առաջին դիպուածն է, դիպուած բարեգուշակ, թէ և ինքն դեռ չէր տեսներ՝ այդ գործոյն և նմանեաց համար՝ նոյն գացած ճամբէն թագաւո-

րական թագի մը ճամբայ ելնելն, որ հասաւ իր ճակտին՝ յետ 35 տարւոյ: Երրորդ անգամ ապահովեց Սմբատ հայրենիքը յետ իր հրեշտակին (իր որդւոյն) ինքնին ելնելով ընդ առաջ Բուղայի, երբ սա նուաճելով զհարաւային Հայս՝ մտաւ 'ի միջնաշխարհն և կուգայր 'ի մայրաքաղաքն Դուին. « Սպարապետն Հայոց՝ իբրև գիտաց, կ'ըսէ » պատմիչն թովմաս, թէ ոչինչ օգուտ » բերէ արտաքոյ հրամանաց նորա լինել, փութացաւ եկն առ նա, և ընկալեալ 'ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն, հանգերձ իւրաքանչիւր կալուածովք, առանց կասկածանաց »: Եւ միւս պատմիչն (Յովհ. կաթ.) « ըզմահ 'ի կեանս խառնեալ՝ սակս աշխարհին իւրոյ փրկութեան, գնայ ընդ առաջ նորա բազում ընծայիւք և պատարագօք. և առնկալեալ 'ի նմանէ » պատուասիրաբար... բազում իմաստութեամբ զսաղապ և զանոտի միտս » նորա յինքն հանգուցեալ վստահէ »: Բուղա ըստ խոստմանն հանգիստ թողուց զՍմբատ. բայց միայն տեղեկութիւն կ'առնուր անկէ իր երթալու տեղերուն և անձանց վրայօք. և երբեմն հետն կուտանէր զնա, թէ ոչ պատեբազմելու՝ գոնէ թշնամիները յորդորելու 'ի հնազանդութիւն, կամ գործը շուտով վերջացնելու համար: Սմբատ այս գժուար և փափուկ առթին մէջ ըրաւ որչափ որ պարտք հայրենեաց և պարտք հպատակութեան միաբան պատուիրեն. և հաւանօրէն իր հեռացած ատեն՝ տեղը թողած էր զԱշոտ. որ չի յիշուիր այս ատեն ուրիշ տեղ, ինչպէս յիշուին հայրն և եղբայրն Աղուանից պատերազմին ատեն. ուր երբ Բուղա չարաչար զարնուած յԱպուսուսէէ՝ յուսահատեալ փակուեր էր վրանին մէջ, և տան օր քովը մարդ չէր մօտեցնէր, միայն Սմբատ սպարապետն համարձակեցաւ ներս մտնելու և բռնաւոր ձեռքէն բռնելու, յիշեցնելով անոր որ պատերազմի մէջ յաղթուիլն ամօթ չէ, այլ վհատիլն. որ և թէ անկէ թէ ամիրապետէն նոր հասած պատուէրով և

զօրքերովն քաջալերուած՝ ըրաւ այն մեծ յարձակմունքը Գթիչ լեռան վրայ, թէ և չյաջողեցաւ. այս միջոցիս կու յիշուի Աշոտոյ եղբայրն Մուշեղ, որ մօտ բլրի մը վրայ կեցած կու դիտէր այն ահաւոր պատերազմը. և երբ յանկարծ լսեց հազարաւոր փողոց և եղջերաց շունչելն, և բազմաբիւր զօրաց արարացի կողորդաց աղխազուր աղաղակն, իբր 250,000¹ սպառազէն մարդկան և երկվարաց փայլմունքն, վազքն, վեր վար շարժիլն, երկու կողմէն յուսադրաբար կամ յուսահատաբար կանչուրտեղն, վարէն վեր մեքենայով նետուած նետեր, տէգեր, գունտեր, պարսեր, վերէն վար սահած թափած քարեր, նետեր նիզակներ, և այն գրեթէ չբացատրելի խառնուրդը, զարնուածքը, անամպ երկնքի մը տակ սաստկաձայն որոտմունքը և աննման հեղեղի մը եռալ գեռալը, խելքն գլխէն թռաւ, սոսկումն և յափշտակութիւն զինքն վերացուցին, կ'ըսէ պատմիչն, մինչև յահաւոր հանդէս գալստեանն Աստուծոյ 'ի դատել զաշխարհ 'ի վախճան ժամանակի. և քանի որ միտքն այն յափշտակութեան և եռանդեան մէջ էր՝ աստուածարեալ մարգարէի կամ ներշնչեալ բանաստեղծի պէս (ինչպէս որ արդէն վարժ էր բանահիւսութեան) սկսաւ յանպատրաստից երգել ստեղծել ոտանաւոր չափով հինգ տուն սրտառուչ երգ կամ շարական մը, որ կու սկսէր,

Անգաղելի ական սրտի նայեցող անձն իմ.

զոր, գիտեմ դու այլ, Հայկակ, աւելի ակործով ուզես կարդալ, քան այն պատերազմին շուկք լսել. — ոհ, ինչ ըսեմ, թերևս այս երգս այլ մեր կորուսեալ Շապուհ պատմիչն հետ գրուի. ուզեմք չուզեմք պէտք է գոհա-

1. Պատմիչն տեղ մը յիշէ որ Բուղա իր բանակին մէջ 500 հոգւոյ մէկ դրօշակիր մը գրեւ էր. այս պատերազմիս մէջ 1000 դրօշակիր կու յիշէ. այս հաշուով 500,000 կ'ըլլար զօրքն. բայց որովհետև ինքնին հոս 200,000 էն աւելի էր կ'ըսէ. մինք Ապուսուսէի բանակն այլ աւելցնելով թերևս աւելի չգրեմք 250,000ը:

նալ այս մէկ տողով, այս փշրանքով, ինչպէս որ մեր ուրիշ շատ հին ցանկալեաց այլ հազիւ մէկ տողիկն մէկ փշրիկն ունիմք, մնացորդք ժամանակաց խառնակութեան, հնութեան կամ անհոգութեան... Բայց դու անցողաբար զայս այլ նշանէ, որ գրականութիւնն այս ատեն այս Բագրատունի տոհմին մէջ ծաղկած է եղեր և պահուած հաւասար զինաշարժութեան:

Այն պատերազմին և Բուղայի գործոց վերջը ու դարձը առաջ յիշեցի. հարկ է հիմայ ճամբել զնա՝ որ դառնամք յԱշոտ. բայց ցաւալի հարկ մ'այլ կայ. պէտք է որ այն ճամբուն վրայ տեսնեմք նաև զհայրն Աշոտոյ, զհայրն Հայոց, զմեծոգին Սմբատ. որոյ մեծ արդիւնքն այլ յառաջ յիշեցի. ինքզինք զոհելով՝ հայրենիքը մեծ սպառնալիք է և կոտորած է ազատելն, այնպիսի ժանտ, և ըստ անուանն (Գարա-Բուղա) կատաղած սեւ ցլու մը եղջիւրներէ. որ և պատուէր տուաւ սպարապետին որ տունը հոգայ, տեղն իր որդին զԱշոտ դնէ իբրև տեղակալ, և զայ իրեն, որ երթան ամիրապետին՝ արժանաւոր վարձքն առնուլ: Սմբատ թերևս կու գուշակէր ինչ վարձք ինչ վերջ ունենալն. բայց գոհ էր իր ըրած երախտեացն առ հայրենիս. գոհ էր իր տեղ իր ամենևին նրմանն և սիրելին թողուն. քաղաքական կողմանէ հոգ չունէր՝ Աշոտոյ պէս խոհեմ և կտրիճ կորիւն մը դնելով իրեն փոխանորդ. ուզեց յապահովել հոգևորն այլ, զոր միշտ մտածէր բարեպաշտութեամբ, յԱստուծոյ և իր հայրերէն ժառանգած, զոր և ժառանգեցուց իր զաւակացն, ոչ պակաս քան զքաջութիւն և զփառս: Արդ որովհետև նոյն ատեն Յովհաննէս կաթողիկոսն վախճանած էր և աթոռը պարապ մնացեր էր աշխարհին շփոթութեան պատճառաւ, Սմբատ այն նեղ ժամանակին կարելոյն չափ եկեղեցականները ժողովեց իր իշխանանիստ քաղաքաւանը, յերազգաւորս, և ատենին յարմար անձ մը չգտնելով անոնց մէջ՝ ընտրել տուաւ արժանաւոր աշխարհական կամ դեռ

կարգ չառած անձ մը, որ էր Զաքարիա, կոտայից գաւառին Զագ գեղէն, որ է մօտ Երևան քաղաքի, և հիմայ Երանոս այլ կ'ըսուի. ինչուան այս ատեն պատմութիւնն բան չի յիշեր այս անձին վրայ, բայց գործն կու վկայէ որ ոչ միայն սրբութիւն վարուց ունէր, այլ և շնորհք տեսչութեան այն բարձր աստիճանին համար՝ յոր ամբարձաւ, նոյն օրը ձեռնադրուելով՝ ՚ի կիսասարկաւագութենէ մինչև ՚ի կաթողիկոսութիւն, և նստաւ յաթոռ Ս. Լուսաւորչին (854). իսկ գիտութեանն այլ վրկայ են իր գրուածքն՝ մեծ տօնից և աւագ շաբաթուան աւուրց վրայ, 15 ճառ, որչափ որ ինծի ծանօթ է. որոց մէջ բաց ՚ի վարդապետական մեկնութեանց, ազգային աւանդութիւնք և սոմարական տեղեկութիւնք այլ կան: Սմբատ՝ աշխարհին հետ զինքն այլ յանձնեց նորընտիր հայրապետին աղօթից. և անշուշտ շատ սրտառուչ եղաւ հրաժարականն՝ երբ մէկ կողմէն կաթողիկոսն իր գաւազանն առած, մէկայլ կողմէն Աշոտ հօրը սպարապետութեան սուրբ առած՝ շուարեր էին այս շուտ և անկարծական փոփոխութեանց վրայ, մինչդեռ նոյն անշփոթ շուտութեամբ զգատտ սպարապետն աւանդելով երկուքին այլ ինչ որ իրեն ամենէն ցանկալի էին ՚ի հայրենիս, և ողջունելով զանոնք, վերջին ողջոյն, փութացաւ երթալու առ Բուղա, առ Զափր, ՚ի Բարելոն և ՚ի բանտ, և ոչ ևս դառնալու ՚ի հայրենիս:

Ը. Ոչ միայն ցաւալի այլ և շատ ըզգուշալի և դժուարին էր Աշոտոյ վիճակն. Բուղա բողբոլին ազատ թողեր էր զնա, բայց Հայոց ոստիկան մ'այլ և իբրև լրտես մը դրեր էր զիպրահիմ. որուն հետ վարուելու թէ և բաւական խոհեմութիւն ունէր Աշոտ, բայց Պաղտատի լուրերն զինքը կու խռովէին. իշխանաց բանտարկութիւնն, իր հօրն այլ անոնց հետ, և հաւատքի ուրացութեան վախն. իր մէկ սխալ կամ յանդուգն քայլն՝ կրնար հօրը կենաց վնաս հասցընել. մանաւանդ երբ ուրիշ իշ

խանք ուրացութեամբ յետ դարձան (857—8), և ոմանք հոն նահատակուեցան, և մնաց 'ի բանտի միայն Սմբատ, որուն գրեթէ ինքնիշխանութեան պատիւ խոստացած էր Բուղա խալիփային կողմանէ. իսկ սա՛ անոր հաւատարմութեան փոխարէն՝ Աստուծոյ անհաւատարիմ ըլլալ կու պահանջէր 'ի Սմբատայ. և զի նա ճշմարիտ մեծահաւատ և մեծոգի էր, ոչ բռնաւորն կրնար յաղթել, ոչ Սմբատայ կապանքը քակուէին, թէ և յուսայր Աշոտ. և այսու յուսով՝ որչափ ջանք և աղաչանք ըրաւ առ Զափր, յայտնի չէ. բայց այնչափ հաւատարմութիւն ցըցուց, որ ոչ իրեն և ոչ հօրը վրայ կրցան կասկած ու մեղադրութիւն մը ընել. թէպէտ ինչպէս հօրն, այսպէս այլ իրեն երբեմն ծանր ծանր և անախորժ հարկեր կու դնէր այս հաւատարմութիւնս. և շատ հեղ ծանրութիւն տուողքն այլ իր համազգիքն կ'ըլլային՝ ապստամբութեամբ և անհնազանդութեամբ. պէտք էր կամ նուաճել զանոնք, կամ անոնց պէս ապստամբ և յանցաւոր երևնալ, և անկէց այլ աւելի՛ մոռացող կարծուիլ հօրը կապանացն և բանտին:

Այսպիսի առիթ մ'եղաւ Գրիգոր Մամիկոնէից տէրն, որ ուրիշ գլխաւոր իշխանաց հետ գերուած և բանտարկուած էր 'ի Բաբելոն, բայց յաջողութիւն մը գտնելով փախաւ անկէ և թշնամեաց միջէն անցնելով եկաւ իր երկիրը, 'ի Բագրեւանդ. և անկէ այլ ամուր տեղ մը գտնելու պատրաստուած ատեն՝ յետ եօթն աւուրց մեռաւ: Ետևէն ընկնող արաբացի ոստիկանն պատուիրեր էր Աշոտոյ՝ որ ուր այլ ըլլայ՝ երթայ բռնէ զԳրիգոր. Աշոտ լսելով անոր մահը՝ զլուխը հանել տուաւ և զըրկեց բռնաւորին, ըսելով որ փախչելու ատեն բռնուած է: Ոստիկանն ուրախացաւ, խալիփայն 'ի վարձ հաւատարմութեան Աշոտոյ՝ իրեն պարգևեց Գրիգորի երկիրը (Բագրեւանդ), և իբր 30,000 Ֆրանգ այլ վրան: Այսոր նման դիպուած մ'այլ եղաւ Արծրունեաց իշխանաց հակառակութեան պատճառաւ:

ուր (ինչպէս առաջ յիշեցի) Գուրգէն իշխանն ազատօրէն կու տիրէր. բայց երբ դարձաւ միւս Գուրգէն եղբայրն Աշոտոյ բուն տիրոջ Արծրունեաց, և ասոր որդին Գրիգոր Դերենիկ (858), մէջերնին շփոթութիւն ծագեցաւ. զոր և չաւելցնելու համար՝ առաջին Գուրգէնն թողուց իր երկիրը և Յունաց կողմը անցնիլ ուզեց. եկաւ ինչուան յէրզիւուս, որոյ արաբացի քաղաքապետքն Բշրի և Զրքրի՝ բռնեցին զնա և Աշոտոյ խաւրեցին. Աշոտ շատ զբժարացաւ այնպիսի կտրիճ և զգօն մարդ մը անարգ վրէժխնդրութեան մատնելու, բայց քանի որ հօրը կապանքն կու յիշէր՝ իր սիրտն աւելի կու կապկրպէր. իրեն յանձնուածն այլ չկրցաւ քակել, այլ յանձնեց թիֆլիզի քաղաքապետին, որ այլազգի էր. նա փորձեց և չկրցաւ հաւանեցնել զԳուրգէն յուրացութիւն, ապա կապ կապի վրայ աւելցնելով զըրկեց զնա 'ի Բաբելոն. ուր նոյնպէս հաստատ մնալով իր հաւատոց վրայ՝ դրուեցաւ 'ի բանտ. բայց մէկ կամ երկու տարի վերջը յաջողութեամբ պրծաւ, դարձաւ իր երկիրը: Արծրունեաց պայազատն (որդին Աշոտոյ) Դերենիկ՝ որ դեռ 14 կամ 15ամեայ պատանի մ' էր, և իբրև հօրը տեղակալ նստէր՝ խալիփային հրամանաւն, երբ իմացաւ Գուրգենի դառնալը՝ վախնալով որ չըլլայ թէ տիրէ երկրին, աւելի իր հասակակցաց լսելով քան խոհական խնամակալաց՝ յանկարծ վրան վազեց, բայց վռնտուեցաւ քաջ ու փորձ իշխանէն. դարձեալ անկարծակի յարձակեցաւ Դերենիկ, և Գուրգէն արդէն հիւանդ ըլլալով ձիէն ընկնալով բռնուեցաւ, և բանտեցաւ ('ի Հաղամակերտ, իշխանանիստ Արծրունեաց). բանտապանն քակեց և ազատեց զԳուրգէն, և զիշերանց բերաւ մտուց զսա Դերենկայ քնարան սննեակը. Գուրգէն արդէն վրէժխնդրութեան պատճառ կրնար ունենալ, որովհետև Դերենկայ պապն սպաներ էր իր հայրը. սակայն իր սիրտն շատ մեծ էր՝ այսպէս գողարար անխոհեմ տղայ մը սպաննելու

համար . և մանաւանդ ազնուական տրդայ մը թէ և թշնամի , սհ , բնութեան խաղաղութեան մէջ միշտ սողայ միշտ գուարթուն է . Գուրգէն՝ թէպէտ և սուրբ անոր գլխուն վրայ վերուցեր էր , մէկայլ ձեռքն այլ սակրին և դանակին վրայ , սակայն չկրցաւ արտասուէր բռնել՝ սիրոյ և ատելութեան կռուին մէջ , լալով կանչեց « Դերենիկ , որդեակ իմ » Դերենիկ , մնաս բարով , այսուհետև » համարձակ տիրէ . ես կ'երթամ 'ի » Յունաստան » : Դերենիկ զարհուրած վեր ընկաւ , երազի պէս և երազէ ահաւոր տեսարանը տեսաւ , իր բանտեայր սուսերամերկ գլխուն վրայ կեցած , « Ա՛հ , հայրս , խնայէ ինձի » կանչեց , և լեզուն բռնուեցաւ : Գուրգէնի բաւական էր եղածն , արիւնէն աւելի էր արտասուէր վրէժն . նոյն արտասուէրը չարբած՝ փութացաւ ելաւ ծածկուեցաւ տեղ մը , ինչուան որ յարմար առիթ գտնէ փախչելու Յունաց երկիրը , ուր որ շատոնց միտք ունէր երթալ : — Բաւական չէր այս սրտառուչ , այս թատերական տեսարանս . հարկ էր որ նոր դիպուածներ այլ նոր նոր տեսարաններ աւելցնեն : իր պահուրտած տեղն (Երանգանի գեղին) վանաց տէրտիրոջ քովն էր , որ հիւրագաւ տիրասիրութեամբ մատնեց զնա առ Դերենիկ . և սա թերևս աւելի վախով քան ատելութեամբ՝ նորէն ամուր տեղ մը պահել սուտաւ , և պատուիրեց այլ որ նեղութիւն չտան : Այս ատեններս մերն Աշոտ զբաղած էր իրեն աւելի մօտ Հայոց , վրաց և Աղուանից իշխանները հանդարտեցնելու և ամիրապետին հպատակ պահելու . այս դիպուածիս չկրցաւ հասնիլ յառաջ քան զկաթուղիկոսն Զաքարիա , որ երբ լսեց Գուրգէնի մեծասրտութիւնն և Դերենիկայ փոքրոգութիւնն՝ քանի մը եպիսկոպոս հետն առած եկաւ աղաչեց մանկահասակ իշխանորդոյն որ արձակէ իրեն կենաց խնայողը . պատանին այլ մէկէն հաւանեցաւ , արձակեց զԳուրգէն , մէկ տեղ դաշինք դրին , և դարձուց անոր հայրենի ժառանգութիւնը ,

որ էր Մարգաստան գաւառը , Նախիջևանի մօտերն , և սիրով բաժնուեցան : Գուրգէն այլ անկասկած ըլլալով 'ի Դերենիկայ՝ սկսաւ վախնալ յԱշոտոյ , վասն զի իբրև ապստամբ յամիրապետաց մէկ մը բռնուած և անոր ձեռքը տրուած , հիմայ որ նորէն փախչելով բանտէն եկեր էր իր տեղը , 'ի հարկէ աւելի յանցաւոր կու սեպուէր , և աւելի պարտք կար Աշոտոյ՝ անոր վրայ աչք ունենալու : Ասոր համար Գուրգէն հանգիստ չէր կենար տեղ մը , այլ աւելի Տարօնոյ կողմերը կու պտըտէր , ուր մայրենի ազգականներ ունէր . և հոն էր՝ երբ Աշոտ խաղաղցրնելով զվերին Հայս՝ յանկարծ եկաւ այս կողմերս , վանայ գաւառը . Դերենիկ վախնալով դիմացն ելաւ . Աշոտ քիչ մ'աւելի խրատել կամ վախցրնել ուզելով , հրամայեց որ արգիլած պահէն զնա վանայ բերդը , ուր ինքն այլ եկաւ : Գուրգէն հոս այլ առաքինի մեծանձնութիւն մը բանեցուց՝ իր մերձաւորին վրայ , բայց թերևս ուրիշ կիրք մ'այլ ընդդէմ Աշոտոյ . 400 կտրիճ ժողովեց և յանկարծակի շտապելով եկաւ ոչ հեռու 'ի վանայ՝ Նարեկայ մօտերը Նորգիւղ ըստած գեղը . և դեսպան խաւրեց Աշոտոյ միտքը իմանալու . եթէ զԴերենիկ պատժել և գերի տանիլ ուզէր՝ ինքն անոր ազատութեան համար պիտի պատերազմէր , (միտքը դրեր էր գիշերանց Աշոտոյ վրայ ընկնիլ) . իսկ եթէ խրատելու համար էր ըրածն , ասոր ապահովագոյն ճամբայ մը կ'երևի կ'ըսէր , եթէ հաճիս , քեզի փեսայացրնել զԴերենիկ , որ հաւատարիմ և հնազանդ մնայ իբրև հօր : Աշոտոյ միտքն այլ այս էր , սիրով հնազանդեցրնել զպատանին , որ նոր կարգուած էր , բայց նոր այլ այրի մնացած իր մատղաշ հարսէն . այս առիթով երեք իշխանքն այլ աւելի բարեկամացան . Աշոտ առաւ զԴերենիկ հետը տարաւ 'ի Բագարան՝ աւանն Շիրակայ , և հոն իր զաւկին պէս պահելով զնա ատեն մը , յետոյ մեծահանդէս հարսանիք ըրաւ , և իր սիրուն Սոփի գասրիկը պսակեց ա-

նոր հետ (862) . ուսկից ծնան երեք անուանի իշխանքն Աշոտ-Սարգիս , խաչիկ-Գագիկ և Գուրգէն . որոցմէ Գագիկ Արծրունեաց առաջին թագաւոր եղաւ և իր ցեղին ամենէն մեծագործ և հռչակաւոր անձն :

Այս ատեններս Գերենկայ հայրն՝ Աշոտ տէրն Արծրունեաց այլ դարձաւ և իր իշխանութիւնը ժառանդեց . նոյնպէս իր երկրին խոստովանող եպիսկոպոսն այլ Յովհաննէս և անոր ընկերն Գրիգոր քահանայն , և ուրիշ իշխանք այլ դարձան . միայն Արծրունեաց որդեսէր մայրն , տիկինն Հռիփսիմէ՝ Բարեղոնի արգելանաց և տաք օդուն չղիմանալով՝ մեռաւ , և հոն օտարութեան մէջ թաղուեցաւ : Նոյնպէս այլ մեր Աշոտոյ հայրն՝ բաղմբերախտն Սմբատ , իշխանակցաց դառնալէն ետև՝ ինքն ամէնուն առաջնորդն՝ ամենէն վերջին եղաւ , և ամենէն աւելի նեղութեամբ բանտի մէջ մնաց . շատ հեղ հրապոյր լսեց , միշտ արհամարհեց , և ուրիշներուն աշխարհական երջանկութիւնը տեսնելով անտրտունջ , անկէ ետև միայն իրեն անանց երջանկութեանը կը փափագէր , որ և չուշացաւ . տասն ամիս նեղութենէ ետև՝ վախճանեցաւ պքսորանաց և արգելանաց մէջ , և թաղուեցաւ Դանիէլի մարգարէին անուամբ ճանչցուած գերեզմանատեղին . թողլով հայրենեաց պատմութեան մէջ պատուելի անուն մը , եկեղեցւոյն մէջ աւելի պատուելի խոստովանող անունը և յիշատակն ընդ արդարոց , զոր Հայագիր նշանակէ ՚ի 25 մեհեկի (3 մարտի) : Աշոտ երկրի վրայ տխուր բայց յերկինս ուրախ բաղդ գտաւ , ունենալու նախ հայր մը , և յետոյ (55 տարի վերջը) որդի մը խոստովանող , երկուքն այլ համանուն Սմբատ . ետքինն իր պապուն միայն համբերութեամբ երկարած խոստովանութիւնը՝ արեամբն այլ կատարեց ու

կնքեց և ինքն այլ սրբազան նահատակաց կարգն անցնելով՝ (Յայսմաւուրաց) Հայագրին մէջ անհեկի ինն (ապրիլի 15) բռնեց . իսկ ինքն Աշոտ այլ թէ ոչ ատենական խոստովանութեամբ՝ այլ յայտնի բարեպաշտ կենաց և մահուանն համար՝ արժանի սեպուեցաւ հօրը և որդւոյն հաւասարելու եկեղեցւոյ մէջ փառօք , որով՝ քան զնոսա գերազանցեց յերկրի :

Ը . Սմբատայ ապերախտ կալանապետն Բաւղա՝ իրմէ ապերախտէն պատիժն առաւ . նոյն ինքն Զափր խալիփայն խաւրեց զնա իբրև կուսակալ ՚ի խորասան , և գաղտ պատուէր տուաւ ու սպաննեցին . իսկ ինքն ամենայն շարեաց առիթն այլ , ինչպէս առաջ յիշեցինք , իր որդիէն սպանուեցաւ (864) . այս հայրասպանն այլ՝ (Մոսղանսէր) խղճէն տանջուած քանի մը ամսէ ետև մեռաւ . տեղն անցաւ (862) իր հօրեղբոր որդին Մոսղային-Պիլլահ , որ իբրև փոխարէն Սմբատայ անպարտ մահուան և Աշոտոյ զրկանաց , անուանեց զսա իշխուսև իշխուսւսց , ոչ միայն Հայոց , այլ և Վրաց և Աղուանից . թէ և սա արդէն իբրև անոնց վերակացու և նախիշխան ճանչցուած էր՝ իր հօրը պանդրխտութեան տարիէն սկսեալ . և այս տարիս (855) կուսնանակուի ՚ի տարեգիրս սկիզբն իր իշխանութեան և Բագրատունեաց պայազատութեան . որ և նշանական հանդիպմամբ (Քրիստոսի ծննդեան ստոյգ տարին հաշուելով) Արշակունեաց թագաւորութեան սկսանելուն հազարամեակն էր . իսկ այն թագաւորութեան վերջանալէն ետև ՚ի 428 թուին Քրիստոսի՝ նոյնպէս 428 տարի էր : Բայց այս պատուոյս հասնելուն բուն առիթն էր Աշոտոյ խոհեմութեամբ և աշարժութեամբ կառավարութիւնն . հաւատարմութեամբն՝ ոստիկանաց և ամիրապետին վստահութիւնը շահեր էր , յորդորանօք և առատաձեռնութեամբ՝ ազգային իշխանաց սիրտը . հասարակաց բարին դիտելով՝ անձնական զրկմունք կամ արհամարհանք բանի տեղ չգնեին՝ զինքն այլ տուելի սի-

1. Սմբատայ վախճանած տարին ըստ ոմանց կ'երևի 859 , և ըստ այլոց 861 . Յայսմաւուրք 10 տարի կ'ըսեն իր գերութիւնը , բայց այս գերութիւնս Բուղային գալէն կու սկսին պատմիչք , որ է 852 . այս հաշուով կրնայ 10 տարի ըսուիլ :

րելի ըրին . զոր և ականատեսն Յովհ . կաթողիկոս այսպէս կու բացատրէ .
 » Յորժամ փոխանակ Սմբատայ հօր իւ .
 » ղոյ պայազատէր զսպարապետութիւն
 » Հայոց , գրեթէ ամենեցուն քան զնա
 » նախագունիցն վեհագոյն ճանաչիւր .
 » վասն զի ընկալեալ զմեծարանս՝ ՚ի
 » բաց արհամարհէր զանարգանս , և
 » միշտ ՚ի հրահանգս բարւոյ կրթու .
 » թեան զինքն վարժէր , և բարի ազ .
 » գումն իւրոյ ոգւոյն տայր . ընդ ամե .
 » նեսեան սէր սերտ , և ոչ ՚ի հակառա .
 » կութիւնս ինչ կամ ՚ի կուս ընդ
 » թշնամիսն մաքառեալ , քան թէ բա .
 » ղեզգեաց բանիւք և բարի օճանալ՝
 » զնոսս ածել յուզղութիւն և ՚ի կամս
 » իւր . իսկ զպայքարանս սնտոի շահուց
 » վնաս իւր վարկեալ՝ և առատաձեռն
 » առ ամենեսեան գտեալ , յինքն զբազ .
 » մաց միտս յանգուցանէր սիրալիր սըր .
 » տիւ . որպէս զի յայսմ սակի ամենե .
 » քեան իսկ նմա հաճեալ հաւանեալ
 » էին . . . և ամենեքեան դաշինս ընդ նը .
 » մա զնէին , որպէս արդարև ընդ թա .
 » գաւորական զարմի » : Խալիփային
 դունէն Աշոտոյ իշխանութեան զգեստը
 տուաւ (862) Ալի իպն Եահեա Էլ-Էլ-
 մնսնի կոչուած ոստիկանն , որ բուն
 Արզնի և Նփրկերտոյ կուսակալ էր , և
 կու պատրաստուէր երթալ ընդդէմ
 Յունաց . ինչպէս զնաց այլ և պատե .
 րազմի մէջ մեռաւ :

Իշխանապետութեան հետ Աշոտոյ
 յանձնեցաւ աւելի ծանր և հոգալի պաշ .
 տօն մը , որ ինչուան այն ատեն քրիս .
 տոնէից չէր տրուած . այսինքն է Հայա .
 ստանի հարկահանութիւնն . հարկերը
 ժողովել և խալիփային դուռը խաւրել ,
 կամ յանձնել ՚ի ձեռս ոստիկանի մը՝
 որ դեռ կու նստէր ՚ի Դուին , իբրև ե .
 րեսփոխան և վերադիտող մը ամիրա .
 պետին կողմանէ , առանց խառնուելու
 ներքին կառավարութեան : Ինչ և ուր .
 չափ էր Հայոց հարկն . մեր պատմիչք
 որոշակի կ'ըսեն 60,000 դահեկան (ոս .
 կի) , որ է իբր 750,000 Փրանգ . բայց
 ասիկայ Ա Սմբատայ , Աշոտոյ որդւոյն
 ատենին համար է , երբ վասպուրական

և ուրիշ մեծ նահանգներ զատուեր էին
 իրմէ , և իր ամիրոփ իշխանութեանն
 տուրքն էր այդ . իսկ անկէ առաջ , Արա .
 բացի պատմիչ մը կու յիշէ որ թէ Բա .
 գրատունեաց իշխանութեան (Շիրա .
 կայ) , թէ վասպուրականի , թէ Սիւ .
 նեաց , և թէ արաբացի ամիրայից իշ .
 խած երկիրներուն , որ են Կարին , Դուին ,
 Արճէշ , Խլաթ , Խազրան , Պէրզէնտ (?) .
 որ մէկ անուամբ Հայաստան կոչուէին ,
 միագումար հարկն էր իբրև 2,500,000
 Փրանգ . ասկէ զատ էր Տարօնոյ երկրին
 հարկն 60,000 կամ աւելի , Արզնի և
 Մուֆարղնի հարկն՝ որ Հայաստանի և
 Տարօնոյ հարկէն աւելի էր , Ամրայ
 հարկն՝ որ Հայաստանի հարկին կիսուն
 չափ էր . Եփրատայ կողմերուն հարկն
 այլ զատ կու յիշուի , և բոլորի մէկէն
 գումարն 10 միլիոն Փրանգի մօտենայ :
 Արաբացի պատմիչն կամ վիճակագիրն
 այս և ուրիշ յիշեալ աշխարհաց մէջ
 միայն բուն Հայաստանին համար կ'ըսէ .
 թէ այս աշխարհս կամ վիճակս արծա .
 թով կու վճարէ հարկը . արծաթ ըսելով
 զուտ արծաթ կ'իմանայ , թէ ստակ (ոս .
 կի և արծաթ) . — կարծեմ առաջինն ,
 վասն զի այս ժամանակէն դար մը ա .
 ռաջ Հայաստանի մէջ առատ և զուտ
 արծաթահանք գտուած էին , խալի .
 փայից տիրած ատեն , հաւանական է
 որ այն արծաթէն կու տրուէր հարկը ,
 գոնէ ատեն մը : — Հիմա հարկին չափը
 հարկահանաց և տնտեսաբանից թող .
 լով , արծաթահանքն այլ երկրաբանից
 քննութեանն , դառնանք յիշխանա .
 պետն Հայոց :

Աշոտ բարձրագոյն պատուոյ հասնե .
 լով իր առաջին իշխանութիւնը , այս .
 ինքն սպարապետութիւնը տուաւ իրմէ
 վերջը ելող եղբորը , որ էր Արաւ ;
 » այր քաջ , անձնեայ և թիկնաւէտ , ա .
 » ռոյզանձն և գեղեցիկ հասակաւ , կու
 » ղովի և յաջողակ ՚ի պատերազմունս .
 » որ և աջակցեալ իսկ եղբոր իւրում՝
 » Աշոտոյ՝ զամենեսեան հնազանդէր ընդ
 » լծով . ծառայութեան , ՚ի բազում կող .
 » մանս բազում անգամ արութիւն ցու .
 » ցեալ , և հռչակաւոր և հոյակապ ՚ի

» մէջ բազմաց երևեալ¹ » : Սպարապետութիւնն էր ինչպէս արդեամբ՝ այսպէս և պատուով առաջին 'ի Հայս այն ատեն՝ յետ նախիշխանին . իսկ երբ իշխանապետն թագաւոր եղաւ՝ իր և ըսպարապետին մէջ նոր պատիւ կամ աթոռ մ' եղաւ իշխանաց իշխանն . ասկէ զատ և վար կարծուի Տերակց-տէր պատիւ և աթոռն . իսկ քիչ ատեն վերջ ասոնցմէ այլ վեր և անմիջապէս թագաւորէն ետև դրուեցաւ Երկրորդ-արքայի պատիւն , որ երբեմն թագաւորին ժառանգն կ'ըլլար , երբեմն մեծ երկրի մը նահապետն . — ուրիշ մեծ պատիւ և աթոռ մ' այլ հաստատեցաւ Մարգարան Հայոց կոչմամբ , որուն իշխանութիւնն կամ պաշտօնն շատ որոշ չի նշանակուիր . յայտնի է որ Սասանեանց տիրապետութեան ատենի մարզպանաց նման չէր , վասն զի անոնք հիմակուան ոստիկանաց պաշտօնը կու վարէին , և իբրև միանգամայն իշխանապետ և հարկահան էին . գուցէ Բագրատունեաց մարզպանն այլ հարկաժողովն ըլլայ , կամ սահմանապահն : Այս պատիւներէս ոմանք , և ուրիշ շատեր այլ , Ամբաստայ ատեն որոշուեցան , և ոմանք անկէ ետքն . իսկ իր հօրը Աշոտոյ կարծ թագաւորութեան ատեն՝ ոմանք միայն , ուսկից անշուշտ իր որդւոցն այլ մասն հաներ էր : Եւ էին (յիշեալ) որդիքն Սմբատ Ա , իր յաջորդ թագաւորն , Գաւրի , Սահակ , Շապուհ . իսկ 'ի դատարացն յիշուին՝ մէկ մը կին Գուարամայ իշխանորդւոյն վրաց . երկրորդ , նախագրեալն Սուխի՝ տիկին Արծրունեաց , երրորդ Մարիամ՝ Սիւնեաց տիկին , կին վասակայ՝ որ մականուամբ կամ փաղաքչական կոչմամբ Գարուռ կ'ըսուէր . զոր և Աշոտ երբ իշխանապետութեան հասաւ՝ հաւանութեամբ ամիրապետին հաստատեց 'ի տէրութեան հայրենեացն , կամ որոշ ըսելով Սեանայ ծովուն բոլորտիքը եղած Գեղամայ գաւառներուն . վասն զի բուն հարաւային Սիւնիք (որոյ գլխաւոր գաւառքն էին

վայոց ձոր և Բաղք) զատ և աւելի մեծապատիւ իշխան մ'ունէին , որ և բուն Սիւնեաց տէր կամ գահերեց իշխան կ'ըսուէր , և այս ատեն իշխողն այլ վասակ մ'էր , իշխանիկ մականուանեալ . մէկայլքն՝ Սիսականք անուանէին իբրև սերունդք Սիսակայ 'ի թոռանց Հայկայ , և և Հայկազնիք . Արաբացիք Սիսական կոչեն զատնք , իսկ զբուն Սիւնիս՝ իրենց գլխաւոր գաւառին վայոց ձոր անունը ծուելով վայգօր կոչեն : Այս ատենուան և քանի մը յաջորդ դարուց պատմութիւնը և անձինքը որոշելու համար՝ հարկաւոր է այս զանազանութիւնը գիտնալ¹ , և մանաւանդ մականունները որոշել , զոր երանի թէ պատմիչք այլ միշտ անուանց քով նշանակած ըլլային , վասն զի անուանակից իշխանք շատ կան , ինչպէս այս երկու մեծ վասակ իշխանքս . որոց մէկն փեսայ Աշոտոյ , միւսն այլ թէ և ոչ խնամի , այլ նոյնպէս կու պատուէր և կու պատկառէր իշխանապետէն . « յաւէտ իմաստութեամբ և հեզահամբոյր հանդարտութեամբ և հաւանութեամբ մեծաւ հնազանդէր Աշոտոյ՝ իշխանին իշխանաց և խրատու նորա զունկն մատուցանէր խնամով , իբրև զօրէնս միշտ 'ի սրտի իւրում պահելով . և 'ի ձեռն այնորիկ յաւէտ իմն ընդարձակագոյն զտուն տէրութեան իւրոյ յարգարէր 'ի բոլոր բարեմասն լրութիւնս . և կայր բազում խաղաղութեամբ ըստ ամենայն հանդիսի բարեպաշտութեան » : — իսկ Գաբուռն վասակ փեսայն Աշոտոյ՝ կարծօրեայ մեռաւ , չորս կտրիճ թողլով , Գրիգոր-Սուփան՝ իր յաջորդն , Աշոտ , Սահակ և վասիլ կամ վասակ . որք միշտ պապերնուն հնազանդ եղան , և մօրերնուն վրայ մեծ սէր և խնամք ցուցին՝ Յուսիպ հալածանաց ատեն . բարեպաշտութեամբ և շինութեամբք այլ

1. Պատմիչք մեր երբեմն այսպէս կու զանազանեն , երբեմն խառն կամ շփոթ կը յիշեն . Չամչեան պատմահայրն այլ մեր հոս գրածին հակառակ զցել Գաբուռին՝ Սիւնի կոչէ , զիշխանիկն՝ Սիսական :

1. Յովհ. կաթ :

անուանի եղան, ինչպէս իրենց մայրն այլ Մարիամ:

Աշոտոյ իշխանապետութեան տարին հեռաւոր աշխարհի մը մէջ այլ իշխանապետ մը անուանեցաւ, և նոր տէրութիւն մը կանգնեց, որ հազարամեայ տևողութեամբ և տարածութեամբ հասաւ Աշոտոյ տիրած տեղերուն այլ տիրեց. Բիւրիկ վարեկացին Շուետի եզերքներէն եկաւ Պալղիկ ծովուն արևելեան կողմը, ուր դարերէ վեր բնակէին Սլաւեանք. որք նեղեալ 'ի Ֆինեան ազգաց՝ յօգնութիւն կանչեցին զնա. Բիւրիկ եկաւ այս ատենս (862) Նովկորոտի քով, և յետոյ 'ի նոյն իսկ 'ի քաղաքն գրաւ իր իշխանապետութեան անթողը. և այսպէս եղաւ սկիզբն լայնածաւալ ու մեծազօր տէրութեան Ռուսաց, որ և յետ հազարամեայ կենացն զեռ երիտասարդութեան ուժոյ մէջ կ'երևի. մինչդեռ իր ծնած կամ ձեւացած ատեն՝ Աշոտոյ ազգն արդէն ծերացեալ էր. Բիւրիկայ ժողովուրդն երկրիս ծայրերէն կու մօտենայ 'ի կենդրոնն, իր հարաւագոյն երկիրն հիմա գրեթէ Հայաստանն է. Աշոտոյ ժողովուրդն իր կեդրոնական կողմերէն կու սփռի ինչուան Նովկորոտէն անդին, և իր հիւսիսագոյն գաղթականքն գտուն 'ի մայրաքաղաքին Ռուսաց ('ի Բեգերպուրկ): ...

Շարունակի

Հ. Ղ. Վ. Ա.

Որդիական սեր: — Բացատրութիւն զգացմանս 'ի հիւսն:

Մարդու ամէն մեծ զգացմանցը մէջ բնազգումն կայ. ինչպէս սիրոյ մէջ, հարց և մարց առ որդիսն ունեցած յարմանը մէջ, որդւոց առ ծնողսն ունեցած երախտագիտութեանը մէջ, և եղբարց ու քերց ընդ իրեարս ունեցած

սիրոյն մէջ: Բայց այս բնազգեցական զգացմունքն կը տարբերին ըստ զանազան աստիճանի քաղաքականութեան ազգաց, և ըստ կրթութեան անհատից: Երբ անկիրթ է մարդ, կերպով մը միայն բնազգմունք են իր զգացմունքն. երբ մարդ կրթեալ է դաստիարակութեամբ, իր բնազգմունքն ալ կը փոխին 'ի զգացմունս, և որչափ դաստիարակութիւնն ազգոյ և մարդու ըլլայ, այնչափ ալ զգացմունքն կ'ըլլան միանգամայն զօրաւոր և փափուկ: Մարդուս առաւելութիւնն՝ իր բնազգմունքն մաքրելու և անոնցմէ զգացմունք կազմելու կարողութենէն կը կախուի: Յայնմ է մարդուս զօրութիւնը, այն է նաև իր պարտքն, որոյ կատարումը Աստուած ուզեց դիւրացնել ու քաղցրացնել: Յիւրաւի կայ 'ի մարդկութեան զարմանալի շղթայ մը զգացմանց, որք բնազգմամբ կը սկսին և 'ի բարձրագոյն պարտս կը յանգին: Բնազգումն է հայրենի ու մայրենի սէրը. բայց տես ինչպէս այդ բնազգումնը կը կատարելագործի և կը զարգանայ նոյն իսկ մանկան երկայն տկարութեանը պահանջած խնամքներով: Ծնողաց գորովոյ բնազգումը՝ որդւոց երախտագիտութեան բնազգումը կը ծնանի. այնպէս որ, հաճոյից և պարտուց զարմանալի յաջորդութեամբ մը, ընտանիքը բնազգմամբ կը սկսի և կ'աւարտի 'ի մաքրագոյնն բարոյական գաղափարաց, 'ի սէր որդիական:

Կը պահանջեմ որ մատենագրութիւնն հետևի այդ աստուածեղէն կարգին և մարդուս բնական կրիցը բացատրութեանը իրենց պատշաճ բարոյական գեղեցկութիւնը տայ. կը պահանջեմ որ իբրև զգացմունք և պարտք ներկայացնէ զանոնք, և ոչ իբրև բնազգմունք, այսինքն իբրև բուռն շարժմունք որոնց կուրօրէն ետևէն կ'երթայ մարդ, և չէ կարող անոնց լաւութեամբը պարծիլ կամ անոնց թերութենէն ինքն զինքն ուղղել:

Ըստ այս գաղափարաց քննենք թէ ինչպէս թէ հնոց մէջ և թէ արդի ժամանակներս բացատրուած է այդ որ-